ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 0587-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2023 թվականի սեպտեմբերի 4-ին և Քաջիկ Զորիկի Գրիգորյանի 22.01.2024թ. թիվ 0364 դիմումը, և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Սայաթ-Նովա փողոց 143 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդթվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաջիկ Զորիկի Գրիգորյանին /ծնված՝ 07/03/1951թ./ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Սայաթ-Նովա փողոց 143 հասցեում 600,0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 60,3 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան:

2.Վերականգնել Քաջիկ Զորիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Սայաթ-Նովա փողոց 143 հասցեում գտնվող 660,3 քմ մակերեսով օրինական հողամասի վրա 1986թ. և 1990թ. կառուցված 463,0 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

3.Քաջիկ Զորիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Արմավիր քաղաք Սայաթ-Նովա փողոց 143 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 660,3 քմ օրինական հողամասի վրա կառուցված թռչնանոցը՝ 17,7 քմ. արտաքին և 5,7 քմ ներքին մակերեսով, ծածկը՝ 10,0 քմ մակերեսով ճանաչել օրինական:

4.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 27,7 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1969.0 ՀՀ դրամ ընդհանուր 54541 /հիսունչորս հազար հինգ հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամ օրինկանացման վճար:

5. Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Սայաթ-Նովա փողոց 143 հասցեում գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023S6ASNN

7.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՐԳՍՅԱՆ**

2024 թ. ապրիլ 30
ք. Արմավիր